Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Արթուր Արմենի Վարդանյանի «Գյուղատնտեսական կոոպերատիվը՝ որպես գործարարական հարաբերությունների սուբյեկտ» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է գյուղատնտեսական կոոպերատիվներին, նրանց՝ որպես իրավաբանական անձանց ինքնուրույն տեսակի առանձնահատկությունների ուսումնասիրությանը և վերլուծությանը: Գյուղատնտեսության զարգացման ճանապարհին կոոպերատիվներն ունեն բավական լուրջ դերակատարություն, ինչի մասին են վկայում նրանց գրանցած արդյունքներն իրենց երկարամյա գոյության ընթացքում: Ուստի կոոպերատիվներին առնչվող օրենսդրության համապարփակ վերլուծությունը, օրենսդրության կատարելագործումը և առկա խոչընդոտների վերհանումն ունի

ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև՝ օրենսդրությամբ կոոպերատիվի անդամի իրավական կարգավիճակին վերաբերող իրավակարգավորումների անկատարությամբ: Կոոպերատիվ մոդելում ներդրումներ ներգրավելու համար առաջնահերթ է ներդրողի իրավական կարգավիճակի հստակությունը, ներդրումների համար անհրաժեշտ իրավական կառուցակարգերի առկայությունը, մինչդեռ ներպետական իրավակարգավորումները խիստ թերի են և նշված հարցերի համալիր կարգավորումը դուրս է մնացել օրենսդրի ուշադրությունից, և դա ինքնին առաջ է բերում բազում գործնական խնդիրներ:

Հեղինակի կոմից ուսումնասիրվել է անհրաժեշտ քանակությամբ տեսական գրականություն, ընդ որում հատկանշական է այն փաստը, որ ուսումնասիրվել են ինչպես ռուս, այնպես էլ արևմտյան հեղինակների մեծաքանակ աշխատանքներ, համեմատական վերլուծության են ենթարկվել օտարերկրյա իրավակարգավորումները: Ուսումնասիրության և համեմատական վերլուծության արդյունքում հեղինակին հաջողվել է կատարել իրավական կարգավորումների բարելավմանն ուղղված օրենսդրական բնույթի մի շարք արժեքավոր առաջարկություններ: Հեղինակն անդրադարձ է կատարել կոոպերատիվ շարժման համաշխարհային փորձին՝ կատարելով նաև գործնական առաջարկներ՝ Հայաստանի Հանրապետությունում կոոպերացիան զարգացնելու ուղղությամբ:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները՝ մատնանշելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Հեղինակն արդարացիորեն ընդգծել է ՀՀ օրենսդրությամբ առևտրային և սպառողական կոոպերատիվների առանձին բնորոշումների բացակայությունը՝ կատարելով օրենսդրական լրացումների առաջարկներ, որոնցով կտարանջատվեն առևտրային և

սպառողական կոոպերատիվների հասկացությունները՝ հիմնավորելով իր առաջարկների գիտագործնական նշանակությունը (էջեր 20, 23):

Հեղինակը քննարկման առարկա է դարձրել Կոոպերատիվների միջազգային դաշինքի կողմից ընդունված Կոոպերատիվ գործունեության սկզբունքները՝ անդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին: Հեղինակին հաջողվել է հիմնավորել սկզբունքների օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը՝ աշխատանքի 55-րդ էջում կատարելով օրենսդրական փոփոխության առաջարկ:

Աշխատանքի շրջանակներում համալիր ուսումնասիրության է ենթարկվել կոոպերատիվի անդամի ինստիտուտը: Ատենախոսության 62-63-րդ էջերում համեմատական վերլուծության են ենթարկվել օտարերկրյա իրավակարգավորումները, որոնք վերաբերում են կոոպերատիվին անդամակցելու իրավունքին, արդյունքում հեղինակը եկել է ճիշտ եզրահանգման առ այն, որ առևտրային կոոպերատիվի անդամ կարող են դառնալ բացառապես ֆիզիկական անձինք, իսկ սպառողական կոոպերատիվի անդամ՝ և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք: Արդյունքում հեղինակը կատարել է օրենսդրական փոփոխության առաջարկ, որն արտացոլվել է ատենախոսության 63-րդ էջում: Աշխատանքի՝ անդամի իրավական կարգավիճակին վերաբերող հատվածում հատկանշական է հեղինակի կատարած ուսումնասիրությունը, որը վերաբերում է անդամի և կոոպերատիվի միջև առաջացող աշխատանքային հարաբերություններին (էջեր 66-69): Հեղինակն իրավացիորեն նկատել է, որ կոոպերատիվի և անդամի աշխատանքային հարաբերությունների կարգավորումը դուրս է մնացել օրենսդրի ուշադրությունից, արդյունքում կատարվել է օրենսդրական լրացման տեղին առաջարկ (70-71-րդ էջեր):

Աշխատանքի հետագա շարադրանքում հեղինակն անդրադարձ է կատարել ներդրող անդամի իրավական կարգավիճակին, համալիր

ուսումնասիրության արդյունքում հեղինակին հաջողվել է վեր հանել առկա խնդիրները, ինչպես նաև կատարել է օրենսդրական փոփոխությունների առաջարկներ, որոնք տեղ են գտել ատենախոսության 78-81-րդ էջերում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ աշխատանքի հետագա շարադրանքում հեղինակն ընդգծել է կոոպերատիվների՝ որպես գործարարական գործունեության ձևի կարևորությունը և կատարել է տեսական ու գործնական նշանակություն ունեցող առաջարկներ, որոնք ուղղված են գյուղատնտեսության ոլորտը ներդրողների համար ավելի գրավիչ դարձնելուն, իսկ կատարվող ներդրումները՝ կոոպերատիվային մոդելում ներգրավելուն: Հեղինակին հաջողվել է հիմնավորել կոոպերացիայի կարևորությունը գյուղատնտեսության զարգացման գործում:

Ատենախոսության ողջ շարադրանքում հեղինակը կատարել է կարևոր գիտապրակտիկ նշանակություն ունեցող տեսական եզրահանգումներ, մշակել է տեսական հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների ընդունելի առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, տասնմեկ պարագրաֆներից և երկու ենթապարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղիկնակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով դիալեկտիկական, ձևական-իրավական, համեմատական-իրավական և գիտական այլ մեթոդներ: Բացի այդ, հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումներն արժեքավոր են, և հաստատապես կարելի է ասել, որ հեղինակը ներկայացրել է գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 7 գիտական հոդվածներում, ինչպես նաև՝ սեղմագրում:

Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, վերոնշյալ դրականությամբ հանդերձ՝ ներկայացված ատենախոսությունում առկա են առանձին դրույթներ, եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք միանշանակ չեն ընկալվում, բանավիճային են, և որոնց վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը՝ դրանց վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ և հիմնավորումներ ունենալու ակնկալիքով.

1. Պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթի շրջանակներում հեղինակի կողմից կատարվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքում փոփոխություն կատարելու առաջարկ, համաձայն որի՝ անհրաժեշտ է ընդհանուր ժողովին լիազորություններ վերապահել դիտորդ խորհրդի որոշման եզրակացության հիման վրա դադարեցնել գործադիր մարմնի լիազորությունները կամ վերացնել գործադիր մարմնի լիազորությունների կասեցումը: Հարկ է նկատել, որ ընդհանուր ժողովի լիազորությունների սպառիչ ցանկը սահմանված է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասիք» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դրույթը ընդհանուր ժողովին չի վերապահել գործադիր մարմնի լիազորությունները դադարեցնելու իրավասություն, հետևաբար նման առաջարկին զուգահեռ հեղինակի կողմից պետք է կատարվեր նաև օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի լրացման առաջարկ, որը ընդհանուր ժողովին լիազորություն կվերապահեր գործադիր մարմնի լիազորությունները դադարեցնելու:

2. Ատենախոսության 3-րդ գլխի 3-րդ պարագրաֆն ունի «Պետության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը՝ որպես գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության հիմնական միջոց» վերտառությունը: Այդուհանդերձ, աշխատանքի 113-116-րդ էջերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հեղինակն անդրադարձ է կատարել նաև

հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝
Ա.ՀԱՅԿՅԱՆՑ

10.12.2021թ.

«Ա. Հայկյանցի ատենագրության իսկությունը հաստատում եմ»՝
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ